



Պարույր Սևակ

Հրդեհների լեզուն

Ես բոցերի լեզուն չեմ մոռանա բնավ:
Հրդեհային բառի հրե լեզուն,
Երբ երկինքը իր լայն անեզրության վրա
Փոխանցում էր խոսքեր հակիրճ ու սուր:
Մարտի թոհ ու բոհում, շատափի մեջ կովի,
Երբ խոսքն անկարող էր, անգոր՝ լեզուն,
Երբ թնդանոթն անգամ իր որոտով հեռվից
Ոչ թե խոստ՝ում էր պարզ, այլ կակազում:
Երբ նահանջում էինք մենք մի ծանր պահի
Եվ սկսում էին շան պես հաշել
Թշնամու գենքերը, որ մեզ մատնեն ահի,-
Երկինքը հայտնում էր. «Կանգնե՛ք, քաջե՛ր»:
Այդ՝ մի գյուղ էր գուցե - կերոնի պես այրված,
Գուցե մի գործարան՝ քուրայի պես,
Գուցե անտառ վայրի, գուցե մի թանգարան՝
Իր գույների փայլի պերճության մեջ:
Այդ՝ հրդեհի խոսքն էր երկնի վրա լազուր,
Հասկանալի, սակայն և անթարգման,
Հրի հրամանը, բոցի անզուսպ լեզուն,
Անխախտ մեր դեվիզը՝ կամ կյա՛նք, կամ մա՛հ:
Իսկ երբ երթի փոշին լուսածիրի նման

Արդեն թշնամական հորիզոնի վրա՝
Ելնում ու ծածկում էր ամենայն ինչ,
Ազդարարում էր նա - «Առա՛ջ, դեպ ի՛նձ»:
Եվ երբ անցնում էինք քաղաքներից-քաղաք,
Մեր հաղթության ուրախ ժխտրի մեջ
Նա մի վերջին անգամ հորիզոնում շողաց,
Կայծագրեր. «Դադա՛ր: Հաղթությո՛ւն: Վե՛րջ»:
Այդ՝ վերջին բոցի մեջ պատերազմն էր այրվում,
Մոխրանում էր կռվի մոլուցքը թեժ՝
Իր իսկ հրախաղով իր մահն ազդարարում,
Իր երկնքի ներքո, իր որջի մեջ...

.....
.....

Ես բոցերի լեզուն չե՛մ մոռանա բնավ,
Հրթիռային խաղի թովիչ լեզուն՝
Լենինի դամբանի հավերժության վրա,
Հրապարակում Կարմիր, Կրեմլի շուրջ...

*

Խաղաղության հուրը վառվում է մեղմուրախ
Հիմա ամե՛ն տան մեջ մեր աշխարհում:
Մենք բոցերի լեզուն չե՛նք մոռացել, բնա՛վ -
-Չգաստությո՛ւն է նա թելադրում:

05.II.1947թ.

Երևան